ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2043 - Ա/12

ք. Երևան «23» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ա. Ասլանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ն որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ լսարանային, մարզական և վարչական գույքի ձեռքբերման համար «Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել՝ **18 017 800** (տասնութ միլիոն տասնյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող գույքի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ

փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 7-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011040145 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ Գ. Մաֆարյան (ստորագրություն) Կ.Տ	«Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ ք.Վանաձոր, Վարդանանց 130 ՀՀ ՖՆ գործառնական վարչության Հ/Հ 900238000591 ՀՎՀՀ 06902697 Տնօրեն՝ Ա. Ասլանյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված
2022 թ. դեկտեմբերի -ին
կնքված N 2043 -Ն/12 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնարտադրական բազայով ապահովում	«Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ լսարանային, մարզական և վարչական գույքի ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի	Գույքը ձեռք է բերվում «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով	Նոր լսարանային, մարզական և վարչական գույքով ապահովված քոլեջ	01.09.2023թ.	18 017 800
		Ընդամենը՝				**18 017 800**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040145
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն
«Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք.Վանաձոր, Վարդանանց 130
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900238000591
ՀՎՀՀ 06902697
Տնօրեն՝

Ա. Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2

2022 թ. դեկտեմբերի -ին

կնքված N 204/3 -Ն/12 պայմանագրի

«Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ ձեռքբերվող գույքի նախահաշիվ

N/N	*Անվանում*	*Տեխնիկական բնութագիր*	*Քանակ*	*Ընդամենը /ՀՀ դրամ/*
	Լսարանային գույք			**11,313,900**
1	Գրասեղան համակարգչի	Սեղան լամինատապատ, կողմերում՝ դարակներով՝ հոլովակների վրա, ձախից՝ հարկաբաժիններ համակարգչի մասերը տեղադրելու համար, միջնամասում շարժական դարակ ստեղնաշարի համար:Գրասեղանի երկարությունը, լայնքը և բարձրությունը համապատասխանաբար՝ 120*80*77սմ: Գույնը՝ բաց շագանակագույն:	10	650,000
2	Գրատախտակ կավիճով գրելու համար	Գրատախտակ աշակերտական, նախատեսված կավիճով գրելու համար, լայնությունը և բարձրությունը՝ 150*100սմ	10	125,000
3	Գրատախտակ գծերով՝ նոտաներ գրելու համար	Գրատախտակ աշակերտական, նախատեսված կատարողական մասնագիտության՝ Սոլֆեջիո առարկայի դասավանդման համար, լայնությունը և բարձրությունը՝ 150*100սմ	7	87,500
4	Գրատախտակ՝ երեք ոտիկներով	Գրատախտակ աշակերտական, նախատեսված հատուկ գունանշիչով գրելու համար:	2	80,000
5	Ապակե դռներով գրապահարան հատ	Լամինատե, բարձրությունը,լայնությունը և երկարությունը համապատասխանաբար 200*40*120 սմ, վերին հատվածը՝ լամինատե շրջանակով ապակե դռներով՝ նախատեսված գրասենյակային թղթապանակների համար,3 հարկանի, ամեն հարկը 35 սմ ոչ պակաս բարձրությամբ; պահարանի ներքևի հատվածը՝ լամինատե դռներով և երկու հարկանի դարակներով: Գույնը՝ բաց շագանակագույն:	40	1,068,000
6	Գրապահարան	Լամինատե, բարձրությունը,լայնությունը և երկարությունը համապատասխանաբար 200*40*120 սմ, վերին հատվածը՝ լամինատե դռներով՝ նախատեսված գրասենյակային թղթապանակների համար,3 հարկանի, ամեն հարկը 35 սմ ոչ	40	1,112,000

		պակաս բարձրությամբ; պահարանի ներքևի հատվածը՝ լամինատե դռներով և երկու հարկանի դարակներով: Գույնը՝ բաց շագանակագույն:		
7	Դասախոսական սեղան	Սեղան լամինատապատ, կողմերում՝ դարակներով: Գրասեղանի երկարությունը, լայնքը և բարձրությունը համապատասխանաբար՝ 120*80*77սմ: Գույնը՝ բաց շագանակագույն:	60	2,610,000
8	ՈՒսանողական աթոռ	Աթոռ ուսանողական, նստատեղի լայնությունը և երկարությունը 36*38 սմ, բարձրությունը՝ 77 սմ	140	1,400,000
9	Ուսանողական սեղան	Ուսանողական սեղան, լամինատե, երկարություն 130սմ, լայնությունը 50ս մ և բարձրությունը 75 սմ:	70	2,240,000
10	Կիսափափուկ աթոռ	Աթոռ գրասենյակային,նստատեղը և հենակը փափուկ: Նստատեղի լայնությունը 42 սմ-ից ոչ պակաս, թիկնակի բարձրությունը՝ 33 սմ-ից ոչ պակաս: Գույնը՝ սև:	50	500,000
11	Հայելի 6մմ /պարային սրահի համար/	Հայելի՝ պարային սրահի համար, լայնություն և բարձրություն՝ 1*1,60 մ^2	15	171,000
12	Հայելի	Հայելի նախատեսված դասասենյակների համա ր /հատուկ երգեցողության բաժնի ուսանողների դասապրոցեսի համար/, լայնություն և բարձրություն՝ 50*100սմ	7	79,800
13	Կախիչ	Կախիչ նախատեսված հագուստի համար	100	120,000
14	Պատուհանի կառնիզ	Պլաստմասե, երկու շարքով:	107	620,600
15	Մոլբերտ և տախտակ	Նախատեսված «Գեղանկարչություն» մասնագիտության համար:	30	450,000
	Համերգային դահլիճ			**3,611,700**
1	Աթոռներ կիսափափուկ	Նախատեսված է համերգային դահլիճի համար:	300	3,000,000
2	Պատուհանի կարնիզ	Պլաստմասե մեկ շարքով 2.70 մ:	15	87,000
3	Արտիստականի հայելի	Նախատեսված է բեմ բարձրանալուց առաջ՝ դասախոսի և ուսանողի համար	1	12,500
4	Լինոլեում	Օգտագործվելու է հատակապատման համար համերգային դահլիճների բեմերի՝ 65 ք.մ. և 20 ք.մ. և պարային դասասեմյակների համար 56 ք.մմ և 56 ք.մ.	197	512,200

	Սպորտային դահլիճ			2,123,800
1	Շվեդական պատ	Փայտից 10 աստիճան (5 սմ տրամագծով), 250սմ բարձրությամբ, 75-80 սմ լայնությամբ, կողային պատի լայնությունը առնվազն 13 սմ, իսկ վերին ձգման համար հարմարեցված 20 սմ հատվածը՝ 22 սմ լայնությամբ, թույլ լաքապատված/մատովի/:	4	250,000
2	Սպորտային նստարան	Նախատեսված է ցատկերի, նախավարժանքի, ցատկերի և այլն:	6	81,000
3	Մարմնամարզական այծիկ	Երկաթյա ոտքերով՝ բարձրությունը փոփոխվող 900-1350 մմ (50մմ բարձրության փոփոխման քայլերով), հեծանը արհեստական կաշվից կիսակոշտ մակերևույթով, երկարությունը 670 մմ, լայնությունը 350մմ և բարձրությունը 280մմ: Քաշը 40կգ:	1	34,000
4	Պարան ձգման	Երկարությունը 24-26մ, բամբակյա - կապրոնե համաձուլվածք, սպիտակ, 100-130մմ շրջանագծով, ծայրերը սահմանված կարգով մշակված, որպեսզի գործվածքը չքանդվի, մեջտեղից ժապավենով կապված:	2	72,000
5	Գնդակ մեծ թենիսի	Կանաչ, դեղին գույների 56-ից-59.4 գրամ, 6-7 սմ տրամաչափի: Փաթեթավորված թափանցիկ կապրոնե ամաններում, յուրաքանչյուրում՝ 3 գնդակ:	20	8,000
6	Ռակետ սեղանի թենիսի	Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ, 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ:	5	25,000
7	Գնդակ սեղանի թենիսի	Նարնջագույն կամ սպիտակ, պլաստիկ նյութից, 40մմ տրամագծով, քաշը 2,7գ: Յուրաքանչյուր 6 հատը փաթեթավորված ստվարաթղթե տուփում:	50	5,000
8	Կամրջակ		1	16,500
9	Վոլեյբոլի ցանց ամրակներով	Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.05-10մ,Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10, 10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ:	1	38,800
10	Բասկետբոլի ցանց,ֆիրմա 0.5մ. Կոմպլեկտ	Վահաններն են, որի վրա ամրացված են օղակներ իրենց ցանցերով:	2	325,000
11	Մարզադահլիճի պատուհանների ցանց	Մետաղական	42	105,000
12	Մարմնամարզական նժույգ	Երկաթյա ոտքերով՝ բարձրությունը փոփոխվող 900-1350 մմ (50մմ բարձրության փոփոխման քայլերով), հեծանը արհեստական կաշվից կիսակոշտ մակերևույթով, երկարությունը 1600մմ, լայնությունը 350մմ և բարձրությունը 280մմ: Քաշը 60կգ:	1	280,000

13	Զուգափայտեր տղաների		1	137,500
14	Մարմնամարզական ներքնակ /մատեր/	Արհեստական կաշվե ծածկույթով, լայնությունը 1մ, երկարությունը 2մ, 5սմ հաստությամբ 100կգ/մ խորանարդ խտությամբ սպունգի միջուկով ներքնակ:	10	262,000
15	Թենիսի սեղան	274x152սմ չափերի, երկաթե ոտքերով, անիվներով, ծալովի, ստանդարտներին համապատասխան	2	336,000
16	Գնդակներ/վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ/հատ	Կաշվից	25	105,000
17	Ցատկապարան	Ծայրերը փայտե կամ պլաստմասե, ցատկեր կատարելու համար:	10	15,000
18	Օղակներ	Երկաթե կամ պլաստմասե:	4	7,200
19	Մարմնմարզական պարան	Երկարությունը ոչ պակաս 4,5մ, բամբակյա- կապրոնե համաձուլվածք, հաստությունը 45-50մմ տրամաչափի, վերին ծայրը երկաթյա կախիչով և ամրակով, ստորին մասը սահմանված կարգով մշակված, որպեսզի գործվածքը չքանդվի,:	1	20,800
				968,400
	Վարչական գույք			
1	Սեղան ղեկավարի դիմադիրով	Սեղան գրասենյակային դիմադիրով և տումբայով լամինատապատ, գույնը բաց շագանակագույն:,ձախ կամ աջ կողմում դարակներ՝ երեք հատ,մեկ դարակի չափերը՝40x15x40սմ : Սեղանի չափերը՝լայնքը 70սմ, երկարությունը 170սմ, գետնից բարձրությունը՝70 սմ: Սեղանի երեսը պետք է դիմացից լինի օվալաձև, հաստությունը 2սմ,եզրերը ուռուցիկ ՄԴՖ պրոֆիլապատ,: Դիմադիրի չափերը՝ լայնքը՝ 60 սմ, երկարությունը՝ 100 սմ, բարձրությունը՝ 66 սմ: Երեսի հաստությունը 2 սմ, իսկ եզրերը ուռուցիկ ՄԴՖ պրոֆիլապատ,: Տումբան լամինատից, երկարությունը՝ 120սմ, լայնք՝ 60սմ, գետնից բարձրությունը՝ 60սմ:Տումբայի աջից և ձախից դռներ (չափսերը 40x55սմ),մեջտեղում չորս հատ դարակ(մեկ դարակի չափսերը 40x15սմ): Տումբայի երեսի եզրերը պետք է լինեն ուռուցիկ ՄԴՖ պրոֆիլապատ, բարձր որակի (երկու տարվա երաշխիքով):	1	400,000
2	Չհրկիզվող պահարան	Պատրաստվում է 2 մմ հաստության պողպատյա թերթից: Պահարանն ունի 2 դուռ, որոնց վրա տեղադրվում են ներքին փականներ: Պահարանի յուրաքանչյուր խոր2 բաժանվում է 2 հավասարաչափ մասի:	2	150,000
3	Մետաղական պահարան	Պատրաստվում է 2 մմ հաստության պողպատյա թերթից: Պահարանն ունի 2 դուռ, որոնց վրա տեղադրվում են ներքին փականներ: Պահարանի յուրաքանչյուր խոր2 բաժանվում է 2 հավասարաչափ մասի:	2	150,000
4	Հագուստի պահարան	Զգեստապահարանը պետք է ունենա 200 սմ բարձրություն, 130սմ լայնություն, 50 սմ խորություն:Ընդ որում 10սմ հիմքով: Գույնը բաց շագանակագույն:Պետք է ունենա երկու դուռ՝200 x 65 սմ չափսերով,	5	133,400

		հագուստի կախիչների համար նախատեսված ձող (հորիզոնական):		
5	Բազմոց ուսուցիչների համար	Լրակազմը պետք է լինի կտորից և փափուկ(նաև ձեռքերի հենակները),գույնը՝ դառչնագույն: Բազմոցի երկարությունը 200սմ,լայնքը՝50 սմ: Բարձր որակի	1	135,000
ԸՆԴԱՄԵՆԸ				**18,017,800**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040145
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն
«Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք.Վանաձոր, Վարդանանց 130
ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900238000591
ՀՎՀՀ 06902697
Տնօրեն՝

Ա. Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ